Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ

Հասցե՝ 0010, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8, տարածք 3
Հեռ.՝ +374 99 515 600
Էլ. հասցե՝ ldpf.foundation@gmail.com

Կարծիք

««Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

05.05.2023 թ.-ին Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում քննարկման է ներկայացվել ««Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (այսուհետ՝ նաև Նախագիծ)[1]:

Ի թիվս այլ կարգավորումների, Նախագծով առաջարկվում է վերախմբագրել «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 11-րդ հոդվածի 5-րդ մասի 9-րդ կետը, ինչի արդյունքում բժշկական գաղտնիք համարվող տվյալները, առանց պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության, այլևս տրամադրման ենթակա չեն լինելու Մարդու իրավունքների պաշտպանին:

Նախագծի հիմնավորման մեջ նման փոփոխությունը հեղինակի կողմից պատճառաբանվում է ոլորտային և մնացյալ օրենսդրության համապատասխանեցման անհրաժեշտությամբ, մասնավորապես նրանով, որ «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի 17-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ պաշտպանին ներկայացված բողոքն ինքնին համարվում է բողոք ներկայացրած անձի համաձայնություն և հիմք է անհրաժեշտ անձնական տվյալները Պաշտպանի կողմից պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, այլ կազմակերպություններից օրենքով սահմանված կարգով ստանալու համար, մինչդեռ «Բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի 9-րդ կետով սահմանվում է բժշկական գաղտնիք համարվող տվյալների փոխանցման դեպքերը առանց պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության:

Այս համատեքստում, հեղինակի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ վկայակոչված «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքը

[1] https://www.e-draft.am/projects/5697/about

մարդու իրավունքների պաշտպանին լիազորում է իրականացնել խախտման քննարկում ոչ միայն անձի՝ իր իսկ իրավունքների խախտման կապակցությամբ ներկայացված բողոքների հիմքով, այլ նաև այլ անձանց (օրինակ՝ խնամակալության և հոգաբարձության մարմինների, ազատությունից զրկված անձանց և զինծառայողների մերձավոր ազգականների) բողոքների հիման վրա, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ (տե՛ս օրենքի 15-րդ և 16-րդ հոդվածները)։

Նշված դեպքերում որևէ մեկնաբանության պարագայում հնարավոր չի լինելու համարել, որ անձը, որի իրավունքների խախտման մասով ՄԻՊ-ը իրականացնում է քննարկում, տվել է իր համաձայնությունը համապատասխան բժշկական գաղտնիք հանդիսացող տվյալները ձեռք բերելու համար, ուստի առաջարկում ենք պահպանել Օրենքի 11-րդ հոդվածի 5-րդ մասի 9-րդ կետի գործող իրավակարգավորումը՝ բժշկական գաղտնիք համարվող տվյալներն առանց անձի կամ նրա ներկայացուցչի համաձայնության ստանալու Մարդու իրավունքների պաշտպանի իրավասության մասով։

Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ